«Այբ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2023 թ. ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

«Այբ» ավագ դպրոց

ԳԾԱԿՈԴ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է **7** տպագիր և **1** դատարկ էջերից:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը և երկհնչյունները.

Արդեն ***երկուսուկես*** դարից ավելի է, ինչ Իտալիայում՝ Ադրիատիկ ծովի ***եզերքին***՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում, ***հիմնադրվել է*** հայկական հոգևոր մի կենտրոն՝ Մխիթարյան միաբանությունը, որն իր վրա բևեռված է պահում քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը: Հայրենի ժողովրդի լուսավորության և մշակութային զարգացման գործին մատուցած իր աներկբա ծառայություններով այդ ուխտը մի հրաշալի կաճառ է և, արդարև, պատիվ է բերում մեր ժողովրդին: Այս միաբանության սրբակյաց եղբայրների բարեկրթությունը, ***անկեղծ*** նվիրվածությունը, բարձր արժանիքներն ու առաքինությունները ***սքանչելիորեն*** ներդաշնակված էին և աշխարհիկ խելամիտ մարդուն համակում էին այն հավատով, թե ***նույնիսկ*** այս կյանքում կա մի ուրիշը՝ ավելի լավը:

Սուրբ Ղազարի միաբանությամբ զմայլված են եղել շատ ճանապարհորդներ: Իսկ անգլիացի հանճարեղ բանաստեղծ Ջորջ Բայրոնի հետաքրքրությունն ու հիացումը ոչ թե ճամփորդական պատահական այցելության արդյունք էին, այլ տևական համակեցության և համագործակցության արգասիք:

Ազատության մեծ երգիչն անսահման ջերմ տողեր է գրել հայ ժողովրդի և նրա ճակատագրի ***մասին.*** «Թերևս դժվար է գտնել որևէ այլ ազգի կենսագրություն, որն առավել զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թուլությունները՝ բռնադատման հետևանք: ***Նրանց*** հայրենիքը պիտի մնա ամենահետաքրքիր երկրներից մեկը»:

5 միավոր

2. Տեքստից դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները: Յուրաքանչյուրի համար գրի՛ր նաև մեկ հականիշ.

ստույգ աներկբա-անորոշ

հիրավի արդարև-հանիրավի

երկարաժամկետ տևական-կարճատև

հիանալ զմայվել-հիասթափվել

2 միավոր

3. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

արմատ+հոդակապ+արմատ քաղաքակիրթ, խելամիտ

արմատ+հոդակապ+արմատ+վերջածանց միաբանություն, ուշադրություն, բարեկրթություն

արմատ+վերջածանց հոգևոր, աշխարհիկ, ճանապարհորդ

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

արմատ+վերջածանց+վերջածանց լուավորություն, սքանչելիորեն

նախածանց+արմատ անկեղծ, անսահման

2,5 միավոր

4. Տեքստում գտի՛ր 2 բարդածանցավոր բառ, որոնցից մեկն ունի ածականով արտահայտված արմատ, իսկ մյուսը՝ բայարմատ: Դո՛ւրս գրիր այդ բառերը և ընդգծի՛ր արմատները:

Բարեկրթություն կամ **խաղաղ**ասիրություն

ուշա**դր**ություն

0,5 միավոր

5. Տեքստից դո՛ւրս գրիր և խոնարհման 1 անկանոն բայ և 1 սոսկածանցավոր բայ, կազմի՛ր այդ բայերի սահմանական եղանակի վաղակատար և հրամայական եղանակի ապառնի ժամանակաձևերը (բայերը գործածի՛ր եզակի թվով, 1-ին դեմքով, դրական և ժխտական խոնարհումով):

անկանոն բայ, սոսկածանցավոր բայ լինել // գտնել

վաղակատար ժամանակաձև եղել եմ, չեմ եղել // գտել եմ, չեմ գտել

հրամայական եղանակ եղի՛ր, մի՛ եղիր // գտի՛ր, մի՛ գտիր

1,5 միավոր

6. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի (8 բառ) խոսքիմասային պատկանելությունը և գրի՛ր դրանք ներքևում տրված համապատասխան տողում: Լրացրո՛ւ փակագծերում նշված հատկանիշները, անհրաժեշտության դեպքում նշի՛ր նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

գոյական (հոլովը, հոլովումը) եզերքին-սեռական-տրական հոլով, ի արտաքին հոլովում, տեղի պարագա

ածական (տեսակը, կազմությունը) անկեղծ-որակական ածական, ածանցավոր, որոշիչ

թվական (տեսակը, կազմությունը) երկուսուկես-քանակական թվական, բարդ, որոշիչ

դերանուն (տեսակը, հոլովը) նրանց-անձնական դերանուն, սեռական-տրական հոլով, հատկացուցիչ

բայ (եղանակը, ժամանակաձևը, դեմքը) հիմնադրվել է-սահմանական եղանակ, ներկա վաղակատար ժամանակաձև, 3-րդ դեմք, ստորոգյալ

մակբայ (տեսակը, կազմությունը) սքանչելիորեն-ձևի մակբայ, ածանցավոր, ձևի պարագա

կապ (տեսակը) մասին-հետադրություն

վերաբերական (տեսակը) նույնիսկ-սաստկական

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

7. ա. **Շարունակի՛ր միտքն այնպես, որ նախադասությունը լինի**

1/ բարդ համադասական՝

Մխիթարյան միաբանությունը պատիվ է բերում հայրենի ժողովրդին և իր վրա բևեռված է պահում քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը:

2/ բարդ ստորադասական՝

Մխիթարյան միաբանությունը պատիվ է բերում հայրենի ժողովրդին, որովհետև մատուցել է բազում աներկբա ծառայություններ ժողովրդի լուսավորության և մշակութային զարգացման գործին:

բ. **Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություն՝ անհրաժեշտ փոփոխությունների ենթարկելով տրված բառերը, ճիշտ դասավորելով և շաղկապներ ավելացնելով:**

Ջորջ Բայրոն, գրել, հայ, ժողովուրդ, հայրենիք, մնալ, երկիր, հետաքրքիր, մեկ, նա, առաքինություն, խաղաղասիրություն, արդյունք, թուլություն, բռնադատում, հետևանք:

Ջորջ Բայրոնը գրել է, որ հայ ժողովրդի հայրենիքը պիտի մնա ամենահետաքրքիր երկրներից մեկը, որովհետև նրա առաքինությունները խաղաղասիրության արդյունք են, թուլությունները՝ բռնադատման հետևանք:

1,5 միավոր

8. Կետադրի՛ր տեքստը:

Ղևոնդ Ալիշանն ասում էր, որ Խրիմյան Հայրիկն իրենից հարյուր օր է մեծ: Ասում էր, թե ինքը ցնծությամբ է լցվում՝ իմանալով, որ Հայրիկը ձի է հեծնում և ժողովրդին այցի է գնում:

-Միշտ նախանձում էր Ձեզ, վեհափա՛ռ Հայրիկ, նկատեցի ես,- և ասում էր, որ Հայրիկն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետև մեր հինավուրց երկրում է ապրում, Մասիսի ստվերում է քնում, հայոց դաշտերի հովն է շնչում, Արաքսի սառնորակ ջուրը խմում:

Հայրիկը սրտանց ծիծաղեց և ասաց.

-Ես վաղը կկարգադրեմ, որ նրա համար Մասիսի հողից, Երասխի ջրից ու Հայաստանի ծաղիկներից մի քիչ վերցնեն և ուղարկեն Վենետիկ:

Ինչպես հետո իմացա, Հայրիկը Ղևոնդին ուղարկել էր իր խոստացածը: Բայց մինչև հասնելը՝ հազար ինը հարյուր մեկ թվականի նոյեմբերին, սիրելի նահապետը վախճանված էր եղել:

3 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Նա շատ սխալներ է գործել, այժմ էլ մեղանչում է:

Նա շատ սխալներ է արել, այժմ էլ զղջում է:

բ. Հանձին իմ ընկերների՝ ես ճանաչում եմ օրինակելի և բարեսիրտ մարդկանց:

Հանձինս իմ ընկերների՝ ես ճանաչում եմ օրինակելի և բարեսիրտ մարդկանց:

գ. Նախարարությունը ծրագրավորել է նոր միջոցառումներ իրականացնել և բարձրացնել աշխատավարձը:

Նախարարությունը ծրագրել է նոր միջոցառումներ իրականացնել և բարձրացնել աշխատավարձը:

դ. Քեզ հետ ես երջանիկ եմ, անհոգ և ուժեղ:

Ճիշտ է:

ե. Ուսանողների մի մասը, կուրսի ղեկավարը շնորհավորեց սիրելի դասախոսին:

Ուսանողների մի մասը, կուրսի ղեկավարը շնորհավորեցին սիրելի դասախոսին:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Լեզվամտածողություն

1. Ի՞նչ կարծիք ունես Մխիթարյան միաբանության և հայ ժողովրդի կյանքում նրա ունեցած դերի մասին: Կարծիքդ արտահայտի՛ր 3 բարդ նախադասությամբ (համադասական և ստորադասական):

3 միավոր

2. Ինչպիսի՞ն էին Մխիթարյան միաբանության եղբայրները: Ի՞նչ կհարցնես նրանց, եթե կարողանաս հանդիպել: Մտքերդ շարադրի՛ր 1 պարզ ընդարձակ և 3 բարդ նախադասությամբ:

2 միավոր

3. *Հաղթել* և *հաղթահարել* բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

4. ***Ոսկե*** **և** ***կանաչ*** **բառերը գործածի՛ր նախադասություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով:**

ուղիղ _____

փոխաբերական _____

ուղիղ _____

փոխաբերական _____

2 միավոր

5. ***Բերան*** **և** ***թև*** **բառերից յուրաքանչյուրով գրի՛ր 2-ական դարձվածք և դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ:**

բերանը բաց մնալ-զմայլվել, հիանալ

բերանը լեզու դնել-թելադրել, տոն տալ

թև առնել-ոգևորվել

թևերը թուլանալ-հուսահատվել, վհատվել

2 միավոր

6. Բառաշարքում ընդգծի՛ր համանունները և դրանցից մեկը 2 տարբեր իմաստներով գործածի՛ր նախադասություններում:

Հող, աղջիկ, **ափ**, գրիչ, **անցավ,** դուռ:

1 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն